ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 18 >> 11 2013թ. N 394

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԲԽՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման պահանջների.

որոշում եմ՝

1. Իրականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրից բխող առողջապահական կազմակերպությունների վերակազմակերպման աշխատանքները՝

1) <<Վաղարշապատի կանանց կոնսուլտացիա>> պետական փակ բաժնետիրական ընկերությունը, որպես առաջնային բուժօգնության ծառայություն, վերակազմակերպման միջոցով միացնել <<Վաղարշապատի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Ստեղծել համապատասխան հանձնաժողով սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնելու նպատակով՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնաժողովին (Հ. Հարությունյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել տասնօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Լ. Մուրադյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2013 թվականի նոյեմբերի 28-ի
N 354 որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Հարությունյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ.

Անդամներ՝

Յու. Մանվելյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի պետ.

Ա. Պողոսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**